

արտագուցեցան նոյնպէս Ազգին բարորութեանը և Ազգ. Սահմանադրութեան յարատե արդիւնաւորութեանը համար բարեմաղթութիւն ըլլալով՝ բաժակներ առաջարկուեցան Ս. Պատրիարք Լօր խիստ համառօտ լայց ազգու ատենախօսութենէն վերջը ուրիշ ատենարանութիւններ ալ եղան սեղանին վրայ, Բաբուրէ-Տեախի Արքահայր Էֆէնտիխ Նորագրոյ խմբագիր Օգուէն Էֆէնտիխ և այլոց կողմանէ:

Այս սեղանը միասնիցամ ևս կրկնուեցաւ՝ և այս անգամ բաղնականաց թիւը 200ը կանցնէր: Սեղանին վերջը ատենախօսութիւնը շարունակուեցան և հանդիսականաց զուարճութեանը համար պարերդութիւնք տեղի ունեցան ամենայն կանոնաւորութեամբ:

Ժամը Տին միջոցները Ս. Պատրիարք Լայրը մեկնելու կամք յայտնելով, նուագածուաց խմբին առաջնորդութեամբ Էլուանդանոցին մօտիկ երկաթուղոյ ճամբուն վրայ եկաւ. այս միջոցին Ս. Պատրիարք Լօր համար որոշեալ կառախումբը գալով, ն. Սրբազնութիւնը իրեն համար պատրաստեալ վահօնը մտաւ և ժողովարդն օրհնելով մեկնեցաւ իր հետ տանելով ժողովրդեան ցնծալից աղաղակները և շնորհակալութիւնը:

Հանդէսն այսպէս շարունակեց մերթ պար մերթ ազգային երգ և մերթ ատենախօսութիւնը լսուելով, մինչև ժամը 11 ուր հանդիսականք խըմբովին և ընկերակցութեամբ երգոց երկաթուղոյ ճամբան հասնելով, վահօնները ցրուեցան և ամենայն օրինաւորութեամբ և բարեկարգութեամբ իրենց տեղերը վերադարձան:

Հայրենիք թ. 299.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՉԳ. ԿԵԴՐՈՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՍՅՈՑ

Թ Ո Ւ Ր Բ Ի Ո Ց

ՅԵՐԵՍՓՈՒԸՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ.

Ազգային ժողովը ուրբաթ օր (Յունիս 4) նիստըրաւ ի Աւլաթիա ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Լօր և ատենապետութեամբ Արարենեան վսեմ. Ստեփան փաշայի:

Ժողովը Բաղ. ժողովոյ ընտրութեան ձեռնարկելով, դիւանաց պատրաստած ցանկէն 14 հոգի ընտրեց քուէից բացարձակ առաւելութեամբ:

- | | |
|---------------------------|--------|
| 1. Ապրօ Սահակ | Էֆէնտի |
| 2. Նորատունկեան Յակօբ | » |
| 3. Նուրեան Յովհաննէս | » |
| 4. Կուրպէնկեան Սերօզբէ | » |
| 5. Էսայեան Յովհաննէս | » |
| 6. Մազսուտեան Սեպուհ | » |
| 7. Սագանեան Ալիքեան | » |
| 8. Աղնաւուրեան Յովհաննէս | » |
| 9. Բազազեան Յակօբ | » |
| 10. Շահպազ Կարապետ | » |
| 11. Մարկոսեան Գրիգոր | » |
| 12. Պօյաճեան Յովհաննէս | » |
| 13. Փրէնկեան Յակօբ | » |
| 14. Կրճիկեան Անդրանիկ պէյ | » |

Ասկէ վերջը Ս. Պատրիարք Լօր մնացած քանի մը առաջարկութիւնները ազմկալից վիճարանութեան մը նիւթ ըլլայէ վերջը, սրբազրութեամբ վարչութեան յղուեցան, որպէս զի եկեղեցականաց մասին ծրագիր մը շինելով Ազգային ժողով մատուցանէ ի վաւերացումն:

Նոյնպէս դաւառները գտնուած հակասահմանադրական շեղումները ի հնազանդութիւն բերելու և եթէ հարկ ըլլայ՝ Բ. Գրան միջոցապատժելու հրահանգ տրուեցաւ Ազգ վարչութեան, միանգամայն և ազգային իշխանութեան դէմ ըմբօստ գտնուող ամեն անհատ ընտրողութեան և ընտրելիութեան իրաւունքէն զրկելու հրաման եղաւ վարչութեան:

Ի վերջոյ Այվաթեան Մատթէոս Էֆէնտիխ պատճառարանեալ հրաժարագիրը որով Մասիսի խմբագիր Իւթիւճեան Կարապետ Էֆէնտիխ դէմ կը բողբէր, Ազգ. վարչութեան յղուեցաւ ի բնութիւն:

Հայրենիք թ. 300.

Հետեւեալ նիստում եւս վարչութեան Կրօնական ժողովոյ ընտրութիւնը կատարուած է ինչպէս կտեսնուի Առաջ ի Գ-րգ թիւէն:

Անցեալ ուրբաթ օր (Յունիս 18) Ազգ. ժողովն զումարեցաւ ընդ նախագահութեամբ Բարձրաշնորհ Պատրիարք Սրբազան Հօր և Առնեապետութեամբ Ասեմ՝ Ստեփան փաշայի Արշաւեան, և ի ներկայութեան 75 Երեսփոխանաց՝ առեանն բացուեցաւ ժամ 7ին միջոցներն:

Նախ մէկ քանի բացակայ երեսփոխանաց և մէկ քանի ալ Հրաժարելոց նամակներն կարդացուեցան, և ապա օրակարգին առաջին խնդիրն վիճարանութեան տրուեցաւ, որ էր Կրօնական ժողովոյ ընտրութիւնը Համագումար ժողովոյ պատրաստած Կրօն. ժողովոյ ընտրութեան ցանկն ջերմ վիճանութեան տեղի տուաւ, Կրօն. ժողովոյ յատուկ հանգամանքներն կրող եկեղեցականաց ոմանց անուններն այդ ցանկէն զօրս մնացած ըլլալուն համար: Երեսփոխաններէն ոմանք այդ ցանկին ապօրինաւորութիւնն հաստատել կուգէին, ոմանք ալ այդ ցանկին բացարձակապէս մերժումն կառաջարկէին, բայց խօսելու կարգն Եռսուֆեան մեծ. Տիգրան էֆէնտիի զայուն ինքն ալ վկայեց այդ ցանկին թերութիւնն և արդարացի գտաւ միւս Երեսփոխան էֆէնտիներուն պատճառարանութիւններն, բայց յաւելցուց թէ « որքան ալ եղած դատողութիւններն իրաւացի են, դարձեալ և այնպէս այդ ցանկն ետ չենք կրնար դարձնել քանի՛ որ եղած կասկածներն ապացուցանելու հիմն սկան փաստեր չունինք ի ձեռին, քանի՛ որ մի և նոյն Համագումար ժողովին կվերաբերի այս ցանկին պատրաստութեան հեղինակութիւնն, որ շատ հուանական է թէ զարձեալ նոյն պիտի ներկայացնէ, քանի՛ որ Պատրիարք Սրբազան Հայրն ալ արդէն այս մասին պէտք եղած տնօրէնութիւնն ալ ըստ կարի ըրած է: »

Եռսուֆեան էֆէնտիի տուած սոյն բացատրութենէն գոհ եղաւ ժողովն, և անմիջապէս Կրօն. ժողովոյ ընտրութեան ձեռնարկեց և քուէից բացարձակ առաւելութեամբ Կրօն. ժողովոյ անբամ ընտրուեցան հետեւեալ շնորհունակ եկեղեցական Ս. Հարք

1. Խորէն Ա. արքայապետ Մխիթարեանց	Բուէ	69
2. Յակոբ	Աշոտ	68

3. Գարրիէլ Ա. Քահանայ Պէշիքթաշի	64	
4. Յովհաննէս ԲՏԿ. Պ. Փիննոզ	49	
5. Գէորգ Աւագ	Արժրունի	48
6. Արիստակէս ԲՏԿ. Գարակէօմրիւկի	47	
7. Խաչատուր	Եէնի — Գաբուի	47
8. Աթանաս	Ս. Խաչի Իւսկ.	46
9. Պետրոս	Գուրուէշաբի	46
10. Ջաքարիայ	Բհրայի	46
11. Մեսրոբ	Մայր Եկեղեցւոյ	46
12. Միքայէլ	Պալատու	45
13. Իգնատիոս Ա. ԲՏԿ. Մալեան	45	
14. Գրիգոր	Սէթեան	42

Աւասիկ ցանկ մը՝ որ թէև ոմանց մանաւանդ Մասիսի կողմնէ ի հրապարակի և յատենի Ազգ. ժողովոյ՝ ապօրէն և ամեն կերպով Սահմանադրութեան հակառակ կրկարծուէր և կամբաստանուէր, Ազգ. ժողովոյ ազատ քուէովն այն պիտի բանիրուն և արժանաւոր եկեղեցականներ արտադրեց, որք իրենց անստղիւտ անցելովն, հեղահամայն բնութեամբն և խոհակնութեամբն հանրածանօթ եղած են, և մեծ յոյս կուտան՝ Ազգին և Եկեղեցւոյ հաւատարմարար ծառայելու: Առտի սոյն արժանաւոր ընտրութիւնն շնորհաւորելով, Ազգ. Երեսփոխանութեան հետ մենք ալ կ'ուսանք որ Կրօն. ժողովոյ նորընտիր Շնորհունակ Ս. Հարք՝ իրենց նախորդէն աւելի արգիւնաւոր պաշտօնաւարութիւն կ'կտակեն իրենց յաջորդաց:

Պ. Մ. ՍՍ. ՆԱՍԱՐԵԱՆՑ

Առումնասէր ազգային մը՝ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր միջոցաւ՝ 1000 գարպոն կը նուիրէ Աւանայ Սանդխտեան ընկերութեան՝ հաստատուն կալուած մը գնելու, և հասոյթը՝ յիշեալ ընկերութեան ջանից շնորհիւ Աւանայ մէջ հաստատեալ աղջկանց վարժարանին յատկացնելու պայմանաւ:

Յիշեալ բարերարն, որ Ռուսիոյ ազգայիններէն Մեծ. Սանատարեանցն է՝ 500 բուպլի ալ Ազգ. Հիւանդանոցի նուիրեր է:

Նորագիր թ. 1847. Յունիս 23.